ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թիւ 406
Ապրիլ 4, 1991

Արժանաշնորհ
Տ. Տիրան Ա. Քհնյ. Փափազեան
Հովիւ Ս. Յովակիմ եւ Անանա Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Փէյլրս Հայթց.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 28, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 10, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին չորս անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Գառնիկ Պոյաճեան
Վան Կիրակոսեան
Անահիտ Բրիճեան
Սոնիա Հարլան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Հոգեւոր Հովիւին, Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ։

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը։ Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ